



2
Չոհերի թիվը
հասել է 800-ի



3
Ահաբեկություն
«Դոմոդեդովոյում»



6
Կյանքը հին ճապոնա-
կան կղզիների վրա - 2



7
Ես ինձ միշտ
ավելորդ եմ զգում



արտակարգ թերթ

N 2 (371) 28.1.2011 - 3.2.2011 www.emergency.am

Հայոց բանակը 19 տարեկան է



Հայկական բանակը ծնվեց հենց պատերազմելիս ու թրծվեց պատերազմելով:

Հայկական բանակը ծնվեց հաղթանակից, որովհետև խաղաղություն էր ուզում հաղթական խաղաղություն:

Ուզում էր դարձյալ ու դարձյալ կայացնել այն ճշմարտությունը, թե խաղաղության մեջ արարել կարողանալու համար պիտի կարողանաս բանակ ունենալ:

Մեր երկիրը քայլ առ քայլ կա-

յացնում է իր Պետականությունը, որում գերակա ու պարտադիր արժեքներ են լինելու հենց հոգեւոր արժեքները՝ Ազատություն, Անկախություն, Մարդ...

Կայացվելու է այնպիսի Պետականություն ու Պետություն, որը կարողանալու է պաշտպանել իր հոգեւոր արժեքները, որոնք էլ հենց, իսկն ասած, բոլոր պատերազմների իրական թիրախներն են:

Ահա թե ինչու մեզ հաղթանակ չնորհած մեր բանակը մենք տեսնում ենք մեր նվաճումների շարքում:

Միայն այդպես ենք մենք կարողանալու դուրս չձնալ պատմությունից, ու նաև՝ մոտենալու ինքներս մեզ:

Շնորհավոր տոնդ, Հայոց Բանակ:

Հայտարարություն

ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարությունը ՀՀ-ում արտակարգ իրավիճակների կառավարման համակարգի հիմնադրման 20-ամյակի տոնակատարության շրջանակներում հայտարարում է փրկության գաղափարը խորհրդանշող հուշարձանի նախագծի մրցույթ:

Պայմաններին ծանոթանալու համար կարող եք զանգահարել 36-34-52 հեռախոսահամարով:

Հայտարարություն

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը ք. Երեւան, Դավթաշեն 4, Ա. Միկոյան փ. 109/8 հասցեում կառուցում է 9-հարկանի (մեկ հարկը՝ նկուղային) շենք:

Կառուցապատողին այդ կառուցված շենքի դիմաց տրամադրվելու է Երեւանի Պուշկինի 25 հասցեում գտնվող վարչական շենքը եւ Չարենցի 5 հասցեի շենքի 1-ին հարկը:

Կառուցապատելու ցանկություն ունեցողներին առաջարկում ենք ներկայացնել համապատասխան հայտ:

Առավել մանրամասն տեղեկությունների համար կարող եք զանգահարել 53-97-54 հեռախոսահամարով:

ԱԻՆ մեդալներ՝ հայրենիքի պաշտպաններին

Ա.թ. հունվարի 27-ին ՀՀ Պաշտպանության նախարարությունում տեղի ունեցավ հանդիսավոր արարողություն նվիրված հանրապետության զինված ուժերի կազմավորման 19-րդ տարեդարձին:

Պատվավոր հյուրերի թվում էր նաև ՀՀ ԱԻ նախարար Արմեն Երիցյանը: Շնորհավորելով նախարարության աշխատակիցներին, նա տոնի առթիվ Արտակարգ իրավիճակների նախարարության մեդալներով պարգևատրեց մի խումբ անվանի զինվորականների:

«ՀՀ ԱԻ նախարարության աշխատակից» մեդալի ար-

ժանացան Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը եւ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ, գեներալ-մայոր Վլադիմիր Գասպարյանը:

«Համագործակցություն հանուն փրկության» մեդալով պարգևատրվածների թվում էին գնդապետներ Սերգեյ Հովհաննեսյանն ու Լավրենտի Հարությունյանը, փոխգնդապետներ Ռուստամ Կարապետյանն ու Սամվել Ասատրյանը, մայոր Արմեն Հարությունյանը:

Միջազգային խորհրդարանը Հայաստանում

Այս շաբաթ Հայաստանում էր արտակարգ իրավիճակների գծով միջազգային փորձագետ-խորհրդատու Ջո Բիշոպը: Սա նրա 3-րդ այցելությունն էր Հայաստան: Առաջինը եղել էր 1988 թվականին, երբ նա՝ որպես փրկարար, եկել էր Սպիտակի երկրաշարժից տուժածներին օգնելու: Այն ժամանակ

Բիշոպը Լոնդոնի հրշեջ փրկարարական մասերի պետն էր: 1990 թվականից հետո նա թողեց պրակտիկ փրկարարությունը եւ անցավ խորհրդատվական դաշտ: 2009 թվականին Ջո Բիշոպը եկավ Հայաստան, որպեսզի Շվեյցարիայի գարգացման եւ համագործակցության գործակալության

ծրագրի շրջանակներում ԱԻՆ Հայաստանի փրկարար ծառայությունում դասավանդի ուսումնական ծրագրերը անցկացնելու նոր մեթոդաբանություն:

Այս անգամ փորձագետ-խորհրդատուն այցելության էր եկել մի քանի նպատակով:

>>> 4

Հաշվեպնդությունների շաբաթ ԱԻՆ-ում

Այս շաբաթ տեղի ունեցան ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության, Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության եւ Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնի՝ 2010 թվականի տարեկան հաշվեպնդությունները:

ԱԻՆ Հայաստանի փրկարար ծառայությունը 2010 թվականին գրանցված արտակարգ դեպքերի ընդհանուր թիվը կազմում է 9816, որից տեխնածին են եղել 6439-ը, այսինքն՝ 65%-ը, տարերային՝ 362-ը՝ 4%-ը, սոցիալ-կենցաղային՝ 3015-ը՝ 31%-ը:

>>> 4

«Էլիտ գրուպ» կյանքի նոր որակ



Սեյսմակայուն
Էլիտար
չինարարության
առաջատարը
տարածաշրջանում

E-mail: info@elitegroup.am; URL: www.elitegroup.am

Հակասեյսմիկ համակարգերի միջազգային ասոցիացիայի անդամ «Էլիտ Գրուպ» ընկերությունը տարածաշրջանի առաջատարն է սեյսմակայուն շինարարության ոլորտում:

Առաջին անգամ Հայաստանում «Էլիտ Գրուպի» շենքերում սկսեցին կիրառել ռետինամետաղյա շերտավոր բարձիկներ, որոնցով երկնաքերներ են կառուցում ճապոնիայում, ԱՄՆ-ում, Չինաստանում եւ այլուր:

«Էլիտ Գրուպը» միակ ընկերությունն է Հայաստանում, որն արժանացել է միջազգային հեղինակավոր վկայականների՝ կառավարման, աշխատանքի պաշտպանության եւ անվտանգության ոլորտներում:

«Էլիտ Գրուպ»՝ բնակելի, առևտրային, առողջարանային ու հյուրանոցային համալիրներ, ամբողջական թաղամասեր, տարածաշրջանային ծրագրեր, տեղական ու միջազգային հեղինակավոր ու հուսալի գործընկերներ:

Ծիշտ կառավարումը գիտություն է, իսկ «Էլիտ Գրուպը» կառավարվում է գիտնականների կողմից:

Երեւան, Պուշկինի 21, ☎ 56-69-22, 56-69-33:



քրոնիկոն



Աին միացյալ հեռախոսահամարն է 1-01

Շմուլ գագ

Հունվարի 20-ին, ժամը 23.58-ին շտապօգնության ծառայությունից տեղեկություն է ստացվել, որ Երեւանի Ջրվեժ թաղամասի 1-ին փողոցի թիվ 17 տանը շուրջ գագից թունավորվել են 1972 թ. ծնված Անուշ Մնացալանյանը եւ 1995 թ. ծնված Աստղիկ Խաչատրյանը:

Կեղծ ահազանգ

Հունվարի 21-ին, ժամը 11.21-ին անձը չպարզված քաղաքացուց ահազանգ է ստացվել, որ Կոտայքի մարզի Արսլանի Ջուրավար Անդրանիկի թիվ 4 հասցեում գտնվող քաղաքապետարանի շենքը պատրաստվում են պայթեցնել:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:
Հրշեջ-փրկարարները, ոստիկանության շնորհակցություն խմբի աշխատակիցների հետ համատեղ, քաղաքապետարանի շենքում իրականացրել են որոնողական աշխատանքներ, որոնց արդյունքում պայթուցիկ սարք չի հայտնաբերվել:

Այնուհետև հրշեջ-փրկարարները, ոստիկանության շնորհակցություն խմբի անդամները եւ ազգային անվտանգության ծառայության աշխատակիցները մեկնել են Կոտայքի մարզ:

պետարանի ներկայացուցչության շենք, որտեղ նույնպես տարվել են որոնողական աշխատանքներ: Պայթուցիկ սարքեր չեն հայտնաբերվել:

Ժամը 14.26-ին որոնողական աշխատանքները դադարեցվել են:

Դիակ բնակարանում

Հունվարի 21-ին, ժամը 19.10-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Տարոնցու 5-րդ շենքի թիվ 502 բնակարանի բնակիչը դռան ու հեռախոսի զանգերին չի արձագանքում եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել հատուկ փրկարար ջոկատի հերթապահ խումբը:

Փրկարարները, ոստիկանության աշխատակիցների ներկայությամբ, բացել են նշված բնակարանի դուռը, որտեղ հայտնաբերվել է 1955 թ. ծնված Մանուշակ Հակոբյանի դին:

• Հունվարի 23-ին, ժամը 18.52-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Արարատյան փողոցի թիվ 29 տան բնակիչը չի արձագանքում դռան եւ հեռախոսի զանգերին, իսկ գազի հաշվիչը բնակարանում գազի ծախս է ցույց տալիս:

Դեպքի վայր է մեկնել հատուկ փրկարարական ջոկատի հերթապահ խումբը:

Ոստիկանության աշխատակիցների եւ հարազատների ներկայությամբ փրկարարները փակել են գազի փականքը եւ բացել բնակարանի դուռը, որտեղ հայտնաբերվել են 1947 թ. ծնված Բենյամին եւ 1949 թ. ծնված Լարիսա Շահինյանների դիերը:

Մենդային թունավորում

Հունվարի 22-ին, ժամը 19.00-ին տեղեկություն է ստացվել, որ սննդային թունավորումով (մախմական տվյալներով՝ բոտուլիզմ, օգտագործել է պահածոյացված բանջարեղեն) Գյումրիի ինֆեկցիոն հիվանդանոց է տեղափոխվել նույն քաղաքի բնակիչ՝ 1985 թ. ծնված Հովհաննես Պողոսյանը:

Բժիշկները տուժածի առողջական վիճակը գնահատել են միջին ծանրությամբ:

• Հունվարի 23-ին Գյումրիի ինֆեկցիոն հիվանդանոցից տեղեկություն է ստացվել, որ ժամը 14.45-ին սննդային թունավորումով (մախմական տվյալներով՝ բոտուլիզմ, օգտագործել է պահածոյացված գազար) հիվանդանոց է տեղափոխվել նույն քաղաքի

Շինարարների թիվ 229/291Ա տնակի բնակչուհի, 1985 թ. ծնված Թամարա Սահակյանը:

Ըստ բժիշկների՝ տուժածի կյանքին վտանգ չի սպառնում:

• Հունվարի 25-ին Շիրակի մարզից տեղեկություն է ստացվել, որ ժամը 14.30-ին սննդային թունավորումով (մախմական տվյալներով՝ բոտուլիզմ) Գյումրիի ինֆեկցիոն հիվանդանոց է տեղափոխվել նույն քաղաքի Երեւանյան խճուղու 147ա շենքի թիվ 50 բնակարանի բնակչուհի՝ 2009 թ. ծնված Մարինա Պողոսյանը:

Ժամը 15.30-ի սահմաններում ծնողները երեխային տեղափոխել են Երեւանի հիվանդանոցներից մեկը:

Դեղորայքային թունավորում

Հունվարի 24-ին, ժամը 23.45-ին տեղեկություն է ստացվել, որ դեղորայքային թունավորումով «Արմենիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել Երեւանի բնակիչ՝ 1983 թ. ծնված Արայիկ Հարությունյանը:

Ըստ բժիշկների՝ տուժածի առողջական վիճակը բավարար է:

• Հունվարի 25-ին, ժամը 07.40-ին տեղեկություն է ստացվել, որ դեղորայքային թունավորումով Աշտարակի հիվանդանոց, այնուհետև՝ Երեւանի «Արմենիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել Արագածոտնի մարզի Օշական գյուղի բնակիչ՝ 1959 թ. ծնված Համլետ Չաթոյանը:

Բժիշկների կողմից տուժածի վիճակը գնահատվել է որպես ծանր:

Մեքենան ջրում

Հունվարի 23-ին, ժամը 07.16-ին տեղեկություն է ստացվել, որ Սյունիքի մարզում՝ Կապան-Նորաշենիկ ավտոճանապարհի 14-րդ կմ-ին հարակից տարածքում տեղի է ունեցել խմելու ջրի խողովակների վթար: Դրա հետևանքով ավտոճանապարհի այդ հատվածը ջրածածկվել է, եւ ջրի մեջ ավտոմեքենա է մնացել, որը դուրս բերելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարարական վարչության փրկարար ջոկատը:

Փրկարարների ուժերով ճանապարհի երթելակի հատված է դուրս բերվել Ս. Սարգսյանի ավտոմեքենան «Օպել Վեկտրա» մակնիշի 51 ՕՕ 909 պետականարանիչով ավտոմեքենան:

Բախվել են մեքենաներ

Հունվարի 22-ին, ժամը 23.00-ին Երեւան-Մեղրի ավտոճանապարհի 140-րդ կիլոմետրում տեղի է ունեցել ճանապարհատրանսպորտային պատահար:

Դեռես չպարզված հանգամանքներում բախվել են «Սամանդ-411» եւ «Աուդի» մակնիշի ավտոմեքենաները:

Պատահարի հետևանքով «Աուդի» մակնիշի ավտոմեքենայի ուղևոր, 1954 թ. ծնված Նունուֆար Մարկոսյանը, «Սամանդ-411» մակնիշի ավտոմեքենայի վարորդ, 1963 թ. ծնված Ջավեն եւ ուղևոր 1954 թ. ծնված Նունե Վիդյանները ստացել են տարբեր մարմնական վնասվածքներ ու տեղափոխվել Վայքի հիվանդանոց, որտեղ Ջավեն եւ Նունե Վիդյանները, ստանալով առաջին բուժօգնություն, դուրս են գրվել:

Ըստ բժիշկների՝ Ս. Մարկոսյանի վիճակը բավարար է:

Մեքենան ընկել է ձորը

Արագածոտնի մարզային ոստիկանությունից հայտնել են, որ հունվարի 25-ին, ժամը 23.40-ի սահմաններում Երեւան-Գյումրի ավտոմայրուղու 70-րդ կմ-ում «Մերսեդես-420» մակնիշի 20 ՏՕ 936 պետականարանիչի ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի հանդիպակաց մաս, շրջվել եւ ընկել ձորակը:

Պատահարի հետևանքով Արման Կարապետյանը եւ էդգար Ասատրյանը տեղում մահացել են, իսկ 1973 թ. ծնված Տավրոս Կարապետյանը եւ Մանվել Ասատրյանը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են Թալինի հիվանդանոց:

Մեքենան ընկել է փանիքներիս

Հունվարի 27-ին, ժամը 03.16-ին շտապօգնության ծառայությունից տեղեկություն է ստացվել, որ ավտոպատահար է տեղի ունեցել Երեւանի Սյանիկյան պողոտա 15 հասցեում եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել հատուկ փրկարար ջոկատի հերթապահ խումբը:

Դեռես չպարզված հանգամանքներում Ա. Արոյանի ավտոմեքենան «Մերսեդես» մակնիշի 11 ՍՏ 864 պետականարանիչ ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթելակի մասից ու ընկել հարակից >>>

միջազգային լուրեր

Պայթյուն հանքում

Առնվազն 30 հանքափոր արգելափակված է մնացել գետնի տակ՝ Կոլումբիայի հյուսիս-արեւելքում Սարդիմատա քաղաքում հանքի պայթյունի հետևանքով: Ութ հանքափորների արդեն հաջողվել է հանել: Նրանք բռնկվել են տարբեր աստիճանի վնասվածքներ են ստացել հանքի փլուզման հետևանքով: Նախնական տվյալներով՝ պայթյունը տեղի է ունեցել հանքում մեթանի մեծ քանակության հավաքման պատճառով:

Հունվարի 22-ին Վրաստանի Տկիբուլիի հանքավայրում տեղի ունեցած պայթյունի պատճառով գոհվել է մեկ հանքափոր: Տեղական լրատվամիջոցների հաղորդմամբ՝ եւս չորս մարդ ստացել են վնասվածքներ եւ տեղափոխվել հիվանդանոց: Ենթադրվում է, որ տեղի է ունեցել մեթանի արտահոսք:

Ջոհերի թիվը հասել է 800-ի

Բրազիլիայի Ռիո դե ժանեյրո նահանգում ջրհեղեղի եւ սողանքների հետևանքով գոհվածների թիվը հասել է 803-ի: Որոնողական աշխատանքները դեռ չեն ավարտվել, այդ իսկ պատճառով արդեն գոհերի թիվը հնարավոր է աճի:



Շուրջ 400 մարդ համարվում է անհետ կորած, որոնք կենդանի գտնվելու հույսը գնալով մարում է: Աղետի հետևանքները վերացնելու աշխատանքներում ընդգրկված են նաեւ զինված ուժերի ստորաբաժանումները՝ ուղղաթիռներով եւ ծանր տեխնիկայով:

Ավտովթար՝ մահացու ելքով

Հունվարի 26-ին Անկարայի շրջաններից մեկում միկրոավտոբուսի եւ բեռնատարի բախման հետևանքով գոհվել է 12 մարդ, եւս հինգը վիրավորվել են: Թուրքական լրատվամիջոցների հաղորդմամբ՝ գյուղատնտեսությամբ զբաղվող աշխատողներին տեղափոխող միկրոավտոբուսի վարորդը սխալ հրահրելով բեռնատարը դեպքի վայրում անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

դը սխալ շրջադարձ է կատարել եւ դիմահար բախվել բեռնատարին: Ավտոմեքենայի հետևանքով գոհվածների հարազատները դեպքի վայրում փորձել են այրել բեռնատարը: Ոստիկանությանը մի կերպ է հաջողվել հանդարտեցնել նրանց:

Պակիստանի Հայդարաբադ քաղաքի մոտ ավտոբուսը բախվել է կայանած բեռնատարին: Բախման հետևանքով ավտոբուսում ու բեռնատարը բռնկվել են: Չոհվել է 32 մարդ, 9-ը տուժել են: Ավտոբուսում 50 ուղևոր է եղել: Ողջ մնացածները հայտնել են, որ վարորդը կիսաքնած վիճակում է եղել:

Փլվել է փանիքը

Սանկտ Պետերբուրգում հիպերմարկետի տանիքից ձյունը մաքրելու ժամանակ տանիքը փլվել է: Պատահարի հետևանքով գոհվել է մեկ մարդ, 17-ը ստացել են տարբեր մարմնական վնասվածքներ:

Վերջին երկու ամսում Պետերբուրգում մի քանի միջադեպ է գրանցվել, երբ մարդիկ դարձել են սառցաբեկորների զոհ: Երեք երեխա տեղափոխվել է հիվանդանոց:

Սառնամանիք ԱՄՆ-ում

Ուժեղ ցրտեր են գրանցվել ԱՄՆ-ի կենտրոնական մասում գտնվող նահանգներում: Եղանակի ազգային ծառայությունից հայտնել են, որ մի շարք նահանգներում ջերմաստիճանն իջել է մինչեւ -23: Իլինոյս, Սինեսատա, Հյուսիսային



Դակոտա եւ մի շարք այլ նահանգների իշխանությունները ոչ տաք տներում բնակվող մարդկանց առաջարկել են տեղափոխվել հատուկ ստեղծված ապաստարաններ: Միայն Իլինոյսի տարածքում բացվել են 120 այդպիսի ապաստարաններ: Հիկազոյում ցրտի հետ մեկտեղ նաեւ ուժեղ քամիներ են սկսվել:

Թռել է 23-րդ հարկից

Արգենտինայի բնակչուհին, որը փորձել է իր կյանքին վերջ տալ, թռչելով 23-րդ հարկից, ողջ է մնացել: Կնոջը փրկել է շենքի մոտ կայանված տաքսի ավտոմեքենան, որի վրա էլ «վայրեցք» է կատարվել: Կինը վնասվածքներ է ստացել: Տաքսիստը հայտնել է, որ մեքենան այդ վայրում կայանել է կնոջ ընկնելուց բառացիորեն մի քանի վայրկյան առաջ:

Ֆաինա Թյունիբաբյան

արագ արձագանքման ծառայություններ



>>> ծորակում գտնվող ավտոտնակների տանիքներին:

Մինչ փրկարարների դեպքի վայր հասնելը՝ մեքենայի վարորդը, 1982 թ. ծնված Ա. Արոյանը բնակիչների ուժերով դուրս է բերվել ավտոմեքենայից և շտապօգնության մեքենայով տեղափոխվել «Էրեբունի» բժշկական կենտրոն:

Բժիշկները տուժածի առողջական վիճակը գնահատել են որպես ծանր կայուն:

Պայթյուն Լեռնագոգում

Արմավիրի մարզից տեղեկություն է ստացվել, որ հունվարի 23-ին, ժամը 18.00-ի սահմաններում 1993 թ. ծնված Գեորգ Գրիգորյանը եւ 1987 թ. ծնված Շիրազ Ղազարյանը Արմավիրի մարզի Լեռնագոգ գյուղին հարակից տարածքում հայտնաբերել են ակնանման առարկա, այնուհետեւ սկսել քարերով հարվածել, ինչի հետևանքով տեղի է ունեցել պայթյուն:

Պայթյունի հետևանքով Գ. Գրիգորյանը եւ Շ. Ղազարյանը ստացել են տարբեր մարմնական վնասվածքներ ու տեղափոխվել Երեւանի «Արմենիա» բժշկական կենտրոն:

Բժիշկների կողմից տուժածների վիճակը գնահատվել է որպես ծանր:

Փլուզում Գյումրիում

Հունվարի 26-ին, ժամը 12.45-ին ահագանգ է ստացվել, որ Շիրակի մարզում Գյումրիի Իսահակյան թիվ 9 շենքում տեղի է ունեցել ինքնափլուզում:

Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարարական վարչության ջոկատը:

Տեղում պարզվել է, որ 1926 թ. կառուցված եռահարկ շենքի 3-րդ հարկի ճակատային հատվածից 5 քար է պոկվել ու ընկել 1-ին հարկի բնակելի, օժանդակ կառուցի հարեւանությանը: Ձոհեր եւ վիրավորներ չկան:

Շենքն ունի վթարայնության 4-րդ կարգ, եւ այնտեղ բնակվում է 216 մարդ: Շինության զննումից պարզվել է, որ նույն հատվածում կա եւս մի քանի բուլցած քար, որոնց վնասագրությունն այդ պահին հնարավոր չէ, քանի որ կառագանջ տանիքի կառուցվածքների փլուզման վտանգ:

Դեպքի մասին տեղյակ են պահվել Շիրակի փոխմարզպետ Ս. Պետրոսյանը եւ Գյումրիի քաղաքապետարանը:

Շարքավա ընթացքում հանրապետության տարածքում արձանագրվել է տարաբնույթ հրդեհների 44 դեպք:

Այրվածքներ հրդեհից

Հունվարի 20-ին, ժամը 10.42-ին ահագանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Արարատի մարզում՝ Արտաշատի Մարքսի փողոցի թիվ 58 տանը:

Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 11.36-ին, մարվել՝ 15.23-ին: Ամբողջությամբ այրվել է Սաթիկ Անտոնյանին պատկանող տունը՝ 60 քմ մակերեսով: Հրդեհի հետևանքով 1927 թ. ծնված Ս. Անտոնյանը ստացել է տարբեր աստիճանի այրվածքներ ու տեղափոխվել Երևանի այրվածքների և ճառագայթային բժշկության կենտրոն: Ըստ բժիշկների՝ տուժածի վիճակը ծանր է:

Յոթ ավտոպոստակ

Հունվարի 24-ին, ժամը 20.50-ին ահագանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւանի Կոռյունի թիվ 25 շենքին հարակից տարածքում:

Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 21.28-ին, մարվել՝ 22.05-ին:

Շենքի բակում այրվել է 7 ավտոտնակի տանիք՝ 200 քմ ընդհանուր մակերեսով:

Հրդեհ մարագում

Հունվարի 25-ին, ժամը 22.11-ին հրդեհ է բռնկվել Լոռու մարզի Անտառամուտ գյուղում:

Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 23.55-ին, մարվել՝ 00.35-ին:

Ամբողջությամբ այրվել է 4. Քոչարյանին պատկանող 24 քմ մակերեսով մարագը, այնտեղ պահեստավորված 200 հալ անասնակերն ու 5 խմ վառելավախոյտ:

սեյսմիկ պաշտպանություն

Ս.թ. հունվարի 20-ից մինչև 26-ը ՄՊԱԾ-ի դիտարկմանը Հայաստանի Հանրապետության տարածքում 3 բալ ուժգնությամբ գրանցվել է թույլ երկրաշարժ, որը տեղի է ունեցել հունվարի 21-ին Վարդենիս քաղաքից 14 կմ հյուսիս-արեւմուտք:

Տարածաշրջանում. ՀՀ սեյսմոլոգիական ցանցը 3 բալ եւ ավելի ուժգնությամբ գրանցվել է տասնմեկ երկրաշարժ: Հունվարի 20-ին երկու 3 բալանոց սեյսմիկ ցնցում է տեղի ունեցել: Թուրքիա-Հայաստան սահմանային գոտում՝ Կարս քաղաքից 42 կմ հարավ-արեւելք, եւ Ադրբեջան (Նախիջևան)-Հայաստան սահմանային գոտում՝ Օրդուբադ քաղաքից 20 կմ հյուսիս-արեւմուտք: Ստորգետնյա էներգիան դեռ չի պարպվել Վրաստանի արեւմտյան հատվածում: Հունվարի 20-ին Վրաստանի Քուբախի քաղաքից 50 կմ հարավ գրանցվել է 3-4 բալ, իսկ հունվարի 23-ին՝ 5 բալ ուժգնությամբ երկրաշարժ: Հունվարի 21-ին տեղի է ունեցել 4 բալանոց երկրաշարժ, որի էպիկենտրոնն է Ադրբեջանի Բիլասուվար քաղաքից 30 կմ հյուսիս-արեւմուտք ընկնող հատվածը: Այդ օրը Վրաստան-Ադրբեջան սահմանային գոտում՝ Հիրսա քաղաքից 20 կմ արեւելք, տեղի է ունեցել երկրաշարժ, որի ուժգնությունն

էպիկենտրոնային գոտում կազմել է 3-4 բալ: Հաջորդ օրը նույն ուժգնությամբ երկրաշարժ է գրանցվել Թուրքիայում, Վան քաղաքից 41 կմ հյուսիս-արեւելք: Շարունակվում է սեյսմիկ ակտիվությունը հոյ գավառում: Հունվարի 25-ին 5 բալ ուժգնությամբ երկրաշարժ է տեղի ունեցել հոյ քաղաքից 2 կմ հարավ-արեւելք, որին մի քանի ժամվա ընթացքում հետեւել է 4-5 բալ ուժգնությամբ երկու հետցնցում: Նույն օրվա ընթացքում Իրան-Ադրբեջան (Նախիջևան) սահմանային գոտում՝ Մակու քաղաքից 35 կմ հյուսիս-արեւելք, գրանցվել է 3 բալանոց սեյսմիկ ցնցում:

Տարածաշրջանից դուրս. 6.0 եւ ավելի մագնիտուդով տեղի է ունեցել երկու ուժեղ երկրաշարժ: Հունվարի 24-ին Տաջիկստանի Կարակուլ քաղաքից 95 կմ հարավ-արեւմուտք (Պամիր) գրանցվել է երկրաշարժ, որն ունեցել է 6.1 մագնիտուդ: Ստորգետնյա առատունները զգացվել են մայրաքաղաք Դուշանբեում: Նույն ուժով երկրաշարժ է տեղի ունեցել հունվարի 26-ին Ինդոնեզիայի Սունատարա կղզու հյուսիս-արեւմտյան ափամերձ գոտում, ինչը ցունամի չի հարուցել: Ձոհեր եւ ավերածություններ չկան:

ՄՊԱԾ գործակալություն

եղանակի տեսություն

Հունվարի 20-26-ը դիվիզիոն հիդրոդերեւութաբանական պայմանները ՀՀ-ում

ՀՀ-ում դիվիզիոն տեսության արձանագրության նախապայմաններն առանց տեղումների եղանակ: Ամենաբարձր ջերմաստիճանը գրանցվել է Սյունիքի հովիտներում՝ +12... +17 °С, Տավուշում, Արցախում՝ +10... +15 °С, Արարատյան դաշտում՝ +8... +10 °С (Արմավիրում՝ +6 °С), Լոռիում՝ +8... +12 °С, Սյունիքի նախալեռներում՝ +6... +11 °С, Արարատյան դաշտի նախալեռներում՝ +5... +8 եւ լեռնային շրջաններում՝ +2... +5 °С (Աշոցքում՝ +1 °С): Ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է լեռնային շրջաններում՝ -13... -18 °С (Մարտունի, Ֆանտան, Սեյրի ճանգարան՝ -10 °С, Շորժա՝ -8 °С), Լոռիում՝ -8... -10 °С (Տաշիրում՝ -17

°С), Սյունիքի նախալեռներում՝ -8... -13 °С, Արարատյան դաշտում՝ -6... -10 °С, Արարատյան դաշտի նախալեռներում՝ -6... -8 °С, Տավուշում, Արցախում, Սյունիքի հովիտներում՝ -2... -6 °С:

Հունվարի 20-ի դրությամբ ձյան ծածկի բարձրությունը Արագածի բարձր լեռնային գոտում կազմում է 46 սմ, Հրազդանում՝ 12 սմ, Մարտունիում՝ 9 սմ, Ֆանտանում, Ապարանում, Գավառում, Ջերմուկում՝ 5-6 սմ, Գորիսում, Ծաղկահովտում, Եղվարդում՝ 1 սմ, Արարատյան դաշտում, Լոռիում, Տավուշում, Սյունիքի հովիտներում ձյան ծածկը բացակայում է:

Առաջիկա 5 օրվա եղանակի կանխատեսում

Հանրապետության տարածքում հունվարի 28-ի գիշերը շրջանների զգալի մասում, 28-ի ցերեկը արեւելյան շրջաններում, 29-ի ցերեկն առավելապես արեւմտյան շրջաններում, 30-31-ին եւ փետրվարի 1-ին ամենուրեք սպասվում են տեղումներ, 28-31-ը լեռնային, 1-ին բոլոր շրջաններում՝ ձյան տեսքով: 29-ի գիշերը սպասվում է առավելապես առանց տեղումների եղանակ: Քամին՝ հարավ-արեւմտյան 2-7 մ/վրկ, 30-31-ին՝ տեղ-տեղ ուժգնացում 15-20 մ/վրկ: Օդի ջերմաստիճանը 28-ի ցերեկը եւ 29-ի գիշերը կմվազի 2-4 աստիճանով, 30-ի գիշերը նույնքանով կբարձրանա, 1-ին կմվազի 5-7 աստիճանով:

խալեռներում՝ 0... -4, Արցախում՝ +2... +6 աստիճանի սահմաններում: Օդի ջերմաստիճանը հունվարի 28-ի ցերեկը կտատանվի լեռնային շրջաններում՝ -3... +2, Տավուշում՝ +5... +10, Լոռիում՝ +2... +7, Արագածոտնի նախալեռներում՝ +2... +5, Արարատյան դաշտում՝ +2... +5, Սյունիքի հովիտներում՝ +7... +12, Սյունիքի նախալեռներում՝ +4... +8, Արցախում՝ +7... +12 աստիճանի սահմաններում:

Երեւանում

Հունվարի 28-ին գիշերը, 29-ի օրվա երկրորդ կեսից, 30-31-ին եւ փետրվարի 1-ին սպասվում են տեղումներ: 28-ի ցերեկը տեղումների հավանականությունը փոքր է, 29-ի գիշերը սպասվում է առանց տեղումների եղանակ: 30-31-ին հնարավոր է քանոն ուժգնացում 13-18 մ/վրկ:

Օդի ջերմաստիճանը հունվարի 28-ի գիշերը կտատանվի -5... -7, ցերեկը՝ +3... +5 աստիճանի սահմաններում:



հայտնել ՌԴ նախագահ Ղեկավարի Մեդվեդեւին՝ «Դոմոդեդովո» օդանավակայանում տեղի ունեցած ահաբեկության կապակցությամբ:

Մահապարտ-ահաբեկչի անձն առայժմ չի հաջողվել պարզել: Դրա վերաբերյալ լրատվամիջոցները տարածել են մի քանի տարբերակ: Իրավապահ մարմինները քննում են բոլոր վարկածները:

Պատրաստեց Գոհար Բաղդասարյանը

Ահաբեկություն Մոսկվայի «Դոմոդեդովո» օդանավակայանում

Հունվարի 24-ին, Մոսկվայի ժամանակով 16.32-ին ահաբեկություն է տեղի ունեցել «Դոմոդեդովո» օդանավակայանում: Միջազգային թռիչքների սպասարարում, որն օդանավակայանի ամենաբարձր մարդ հատվածներից է, մահապարտ-ահաբեկչի գործարկած ռուսերի հետևանքով տեղի է ունեցել հզոր պայթյուն:

Ահաբեկչական գործողության հետևանքով զոհվել է 35 մարդ: Տարբեր լրատվամիջոցների տրամադրած տեղեկությունների համաձայն՝ վիրավորների թիվը տատանվում է 110-ից 200-ի միջև:

Հունվարի 27-ին ՌԴ առողջապահության նախարարության տարածած հաղորդագրության մեջ ասվում է, որ հիվանդանոցներում է շարունակվում մնալ 123 մարդ: Տուժածներից 19-ի վիճակը ծանր է:

Ահաբեկությունից վիրավորների թվում նշվում է 3 հայազգի ուղեւորի անուն՝ 1946 թ. ծնված Գուրյան Վարդանիսի 1993 թ. ծնված Յուրի Ալբերտի Վարդանյան եւ 1969 թ. ծնված Կարեն Միքայելի Գալուստյան:

Ձոհվածների եւ տուժածների թվում, ՌԴ քաղաքացիներից բացի, կան նաեւ Սեո Բրիտանիայի, Գերմանիայի, Իտալիայի, Ֆրանսիայի, Սլովակիայի, Տաջիկստանի, Բուլղարիայի եւ Ուկրաինայի քաղաքացիներ:

Պայթյունի պահին «Դոմոդեդովո» օդանավակայանում վայրէջք էին կատարել ինքնաթիռներ Լոռուից, Բրյուսելից, Բաթլից եւ Դուշանբեից:

Ռուսական աղբյուրների փոխանցմամբ՝ օդանավակայանում պայթած 5 կիլոգրամանոց տրոտիլի ռումբը լիցքավորված է եղել նաեւ մետաղյա տարրերով, որոնց տարածումը մարդկանց բեկորային վնասվածքներ է հասցրել:

Հունվարի 26-ին Ռուսաստանում սուգ էր հայտարարվել:

ՀՀ նախագահ Սեֆ Սարգսյանը ցավակցություն է



Միջազգային խորհրդարան Հայաստանում

<<< 1 Սկզբում Ձո Բիշոպը հանդիպում ունեցավ Արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանի հետ ու ներկայացրեց իր այցելություն-առաքելության նպատակները, քննարկվեցին համագործակցության հարցեր:

ժաիրապարակում անցկացված վարժանքի ժամանակ:
- *Ես ուսմանս ժամանակ, որ դասընթացն իսկապես լավ արդյունք է սպել: Այն, ինչ ես տես, լավ կազմակերպված վարժանք էր: Բոլոր մասնակցիները,*

ասում է ԶԳ ԱԻՆ ԶԳԾ Շիրակի մարզային փրկարարական վարչության պետ Անդրանիկ Պողոսյանը, - *սա լավ հարմար հրատարակ է, որտեղ կարող եմ մի քանի տեսակի վարժանքներ անցկացնել: Կան նաև զեմանցումներ, որտեղից մեր հր-*

անցկացրել է նաև հրահանգային դասընթացներ, - սա ԵՉԳԳ հայաստանյան ծրագրերի ղեկավար Սերգեյ Գովալենկոյանը, - հրահանգիչները հետագայում իրենց ստացած գիտելիքները տարածեցին բոլոր հրեջ մասերում: Բիշոպը եկել է նաև դասընթաց, թե ո՞րտեղից են մենք հաջողակ եղել այդ գործընթացի մեջ:

թաց են տեսնում իմ՝ 2009-ի այցելությունից հետո: Ղեռ, իհարկե, երկար ճանապարհ կա գնալու, բայց կարծում եմ, Շվեյցարիայի զարգացման գործակալության միջոցով բազմաթիվ նոր հնարավորություններ կարող են բացվել ԶԳԾ-ի համար: Տեսնելով ամբողջ դասընթացի արդյունքները, էմոցիոնալ, հետաքրքիր խոսակցությունն ու էներգիան՝ ես կարող եմ ասել, որ Հայաստանի փրկարար ծառայությունը կհասնի իր բոլոր նպատակներին: Իսկ մեր համագործակցությունը կարողանալի, լիարժեք և անհատական, որոնց վրա լիարժեք ղեկավարում են հետագայում, որտեղից կարելի է գործընթացները մշակել, - ասաց Ձո Բիշոպը:



ԶԳ ԱԻՆ ԶԳԾ-ն դիմել է INSARAG-ին (ՄԱԿ-ի որոնողափրկարարական, խորհրդատվական խումբ), որպեսզի միջազգային ստանդարտներին համապատասխան փրկարարական խումբ ստեղծի: Ձո Բիշոպի այցի նպատակներից մեկն էր ուսումնասիրել մեր փրկարար ծառայության հնարավորությունները, տեսնել, թե ինչ նոր գիտելիքների ու սարքավորումների անհրաժեշտություն կա, որպեսզի ԱԻՆ ԶԳԾ-ն նախապատասխան կլասիֆիկացիան անցնելու ու միջազգային չափանիշներին համապատասխան փրկարարական խումբ ունենալու համար:

Փորձագետի այցի մեկ այլ նպատակն էր ստուգել, թե ինչ արդյունք է տվել 2009-ին իր անցկացրած մեթոդաբանական դասընթացը: Իսկ արդյունքները նա տեսավ Շիրակի մարզում՝ Ախուրյանի հրեջ փրկարարական ջոկատի վարժանքի ղեկավարներն ամենայն ճշգրտությամբ կատարեցին իրենց դերերը, - ասաց Ձո Բիշոպը:

Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալությունը ԱԻՆ Հայաստանի փրկարար ծառայությունում 2009 թվականին

Ձո Բիշոպը նաև ուսումնասիրեց այն սարքավորումները, որոնք կրկին «Արձագանք»-ի շրջանակներում ստացել էր Ախուրյանի հրեջ փրկարարական ջոկատը: Ինչպես պատմում են հրեջները, ծրագրի միջոցով ստացած հրեջ փրկարարական գիտելիքները և նոր գործիքները իրենց աշխատանքը անհամեմատ ավելի արդյունավետ են դարձրել:

- *Առաջ մենք միայն հրեջ էինք, իսկ հիմա նաև՝ հրեջ-փրկարար: Մոտ մի քանի առաջ էր, որ մեզ մոտ էին փշիկները - հիշում է Ախուրյանի ԶԳԾ հերթափոխի պետ Վահրամ Մարտիրոսյանը, - մենք հրեջներով կարողացանք այս գործիքների միջոցով փրկարարական աշխատանքներ անել ու 2 երեխայի փրկեցինք:*

Փորձագետի այցի մեկ այլ նպատակն էր ստուգել, թե ինչ արդյունք է տվել 2009-ին իր անցկացրած մեթոդաբանական դասընթացը: Իսկ արդյունքները նա տեսավ Շիրակի մարզում՝ Ախուրյանի հրեջ փրկարարական ջոկատի վարժանքի ղեկավարներն ամենայն ճշգրտությամբ կատարեցին իրենց դերերը, - ասաց Ձո Բիշոպը:

Հաշվետվությունների շաբաթ ԱԻՆ-ում

<<< 1 Համեմատելով 2010-ը 2008-2009 թվականների հետ՝ պարզ է դառնում, որ անցյալ տարի արտակարգ դեպքերի կտրուկ աճ է եղել: 2008-ին Հայաստանում գործընթացներ էր 7035 դեպք, իսկ 2009-ին՝ 7788: Աննպաստիչ աճը անենաշատը վերաբերում է տեխնոլոգիայի դեպքերին: 2008 և 2009 թվականների համեմատ դրանց թիվը 2010-ին ավելացել է համապատասխանաբար 1671-ով և 2764-ով:

2008 թ.՝ 2207): 2010 թվականին հրդեհներ մեծ մասամբ բռնկվել են բուսածածկ տարածքներում, անասնապահության կուտակման վայրերում՝ 2794 դեպք: Բնակելի տարածքներում գրանցված հրդեհների թիվը կազմել է 125: ԶԳ ԱԻՆ ԶԳԾ Հատուկ փրկարարական ջոկատը 2010 թվականին արձագանքել է 2126 կանչերին, որոնց գերակշռող մասը՝ 1706-ը, կենցաղային բնույթի են եղել, 11-ը՝ ջրափրկարարական-ջրասուզական կանչեր: Փրկարարները ավտոկթորներից փրկել են 16 մարդ, ջրային հսկվող տարածքներում՝ 13 մարդ:

Յարգեբարում որոնողափրկարարական աշխատանքների ընթացքում փրկվել է 30 մարդ: Օրինակ, հունվարի 1-ին Ղափան քաղաքում փրկվել է ձորն ընկած 1 մարդու կյանք, օգոստոսի 8-ին Ողջի գետում՝ ջրահեղձումից փրկվել մեկ քաղաքացի: Միսիանի, Կապանի հրեջ-փրկարարների ուժերով, Ղազար գետի պատճառով հեղեղվելուց, փրկվել է Բոնակոթ գյուղը: Փրկարարները բացել են խցանված գետը և ջուրը հոսել է իր հունով:

այլանը», «ժամկետանց, արգելված թունաքիմիկատների, թունաքիմիկատների գերեզմանոցների և վտանգավոր քիմիական թափոնների սպառնալիքի կառավարման հայեցակարգը», «ԶԳ փրկարարական համակարգի բարեփոխումների հայեցակարգի» նախագիծը:

2010 թվականի ընթացքում որոշակի աշխատանք է իրականացվել Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցի տարածքում ստեղծված արտակարգ իրավիճակի վերացման ուղղությամբ, որի արդյունքում վերականգնվել է գերեզմանոցի վնասված ծածկի և իրականացվել այլ անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումներ:

Նախարարը կարեւորեց ԶԳԾ աշխատակիցներին՝ օտար լեզվի իմացությունը:

- *Ես եզրափակում եմ ձեր այս այցելությունը հանձնարարել եմ ուսուցողություն դրածնել այդ խնդիրը: Մեր աշխատակիցները լավ են գնում այլ երկրներ՝ փրկարարական աշխատանքներ և ուսումնասիրում են իրենց մասնագիտությունը, սա կարևոր է, որ լեզվի հետ խնդիրներ չունենան, - նշեց նա:*

Արմեն Երիցյանը խոսեց ԱԻՆ ԶԳԾ-ում սակավորների ծառայություն ստեղծելու մասին: Նա նաև հայտնեց, որ շուտով Դավթաշենում նոր կառուցված նախարարության շենքի մոտ սկսվելու է 9 հարկանի շենքի կառուցում՝ Հայաստանի փրկարար ծառայության համար:



2010 թվականին մշակվել են հաստատվել են «ԶԳ քաղաքացիական պաշտպանության հանրապետական պլանը», «Մարդու իրատապ օգնության համապետական համակարգի ստեղծման հայեցակարգը հաստատելու մասին», «Եզրամասային կառավարման կենտրոնի ստեղծման ծրագիրը հաստատելու մասին» ԶԳ կառավարության որոշումները, «Որոնողափրկարարական աշխատանքների կազմակերպման կարգը», «Ուժեղ երկրաշարժի դեպքում ԶԳ բնակչության պաշտպանության կազմակերպման

Անցյալ տարվա Օգոստոսի 28 հայ հրեջ փրկարարներ Երվանդի մոտ ստացած հրեջ մեքենաներով 15 օր արունակ մասնակցեցին Ռուսաստանի անտառային հրդեհների մարման աշխատանքներին ու մի քանի գյուղ փրկեցին:

Անցյալ տարի Հայաստանում անցկացվեց միջազգային խոշոր ուսումնասիրական ծրագրի «Արմենիա 2010» դաշտային վարժանքը, որին մասնակցեց 5 միջազգային կազմակերպություն և 28 երկիր:

ԱԻՆ ԶԳԾ հաշվետվության ժամանակ ԱԻՆ նախարար Արմեն Երիցյանը խոսեց մի քանի խնդիրների մասին: Նա նշեց, որ այս տարի պիտի ուշադրություն դարձնի պարամեդիկների ինստիտուտի ստեղծմանը:

ԶԳ ԱԻՆ Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն

2010 թվականին Կենտրոնի մշակման խնդիրը եղել է չգրանցված արտադրական վտանգավոր օբյեկտների (ԱՎՕ) հայտնաբերումը, դրանց գրանցումն և փորձաքննության իրականացման ապահովումը:

Անցյալ տարի Արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրում գրանցվել է 1086 ԱՎՕ: 2009 թվականին դրանց թիվը կազմել էր 415, այսինքն 2010-ին արձանագրվել է աճ 262 տոկոսով: 2011 թվականի հունվարի 1-ի դրությամբ ռեեստրում ընդհանուր առմամբ գրանցված են 12 412 արտադրական վտանգավոր օբյեկտներ:

2010 թ.-ի ընթացքում կնքվել է տեխանվտանգության փորձաքննության 2823 պայմանագիր, արդյունքում փորձաքննության է ենթարկվել 6328 արտադրական վտանգավոր





ԱԻՆ Հայպեպիդրոմերը

Սկիզբը՝ նախորդ համարում

ՀՀ ԱԻՆ Հայպեպիդրոմետն իրականացնում է նաև անհատական դիտարկումներ...

Ներկայումս Հայպեպիդրոմետի կանխատեսումները կատարվում են 5 օրվա կտրվածքով...

ՀՀ ԱԻՆ Հայպեպիդրոմետը նաև կլիմայի փոփոխության հետ կապված լուրջ վերլուծություններ ունի...

ՀՀ ԱԻՆ Հայպեպիդրոմետը նաև կլիմայի փոփոխության հետ կապված լուրջ վերլուծություններ ունի...

Այդ ուղղությամբ Հայաստանը զբեկույցներ է ներկայացնում կլիմայի փոփոխության ԵՊՏԵԿԱԿԱԿԻՆ կոնվենցիայի միջկառավարական փորձագետների խմբին...

Այդ զեկույցներում հիմնական հղումը կատարվում է մեր տեղական իրավասուների համարվող կանխատեսումներին...

Վիճակագրության նախարարության հավանական է, որ հայպեպիդրոմետը նախանշված գործողություններն իրականացնելուց հետո արդյունավետությունն ավելի կբարձրանա...

Քանի որ Հայաստանը գտնվում է օվկիանոսից հեռու, մեզ, քերես, ջրի տակ մնալ չի սպառնում: Սակայն կլիմայի փոփոխությունը մեր երկրում այլ՝ ոչ պակաս էական սպառնալիքներ ունի:

Մեր տարածքի արևմտյան մասում, որ ավելի հասկանալի լինի, - ասում է Լեւոն Վարդանյանը, - Սեդրիում, գիտեմ, մենք գիտնալիս թույլ ենք ունենք, կլիմայի փոփոխության արդյունքում այդ գիտնալիս թույլ ենք կսկսենք անել մարտահարկական ծրագրեր, որոնք կստանան արդյունավետ և սպառնալիքներ են: Ըստ գնահատականների՝ տեղի կունենան ամառային և օդի ցածր թափումներ...

